հովանաւորութիւն ընդունող մի հայ վարդապետի պաշտպանութեան համար, ապա նա կամենում էր իր տէրութեան ազդեցութիւնը ցոյց տալ արևելքում»։ Արֆունից մէկը՝ Ֆրանսիական հիւպատոսը համարեց այդ գործը կամ կրօնական ազդեցութեան տակ լինելով, կամ կամենում էր իր տէրութեան ազդեցութիւնը ցոյց տալ արևելքում...

„Ազգի շահերին դաւաճանել են և դաւաճանում են մանաւանդ այն մարդիկը, որոնք կրօնով հեռացած են ազգի ամբողջութիւնից։ Օրինակ, Մեհրուժան, Վասակ և այլն։ Հայ բողոքական, հայ կաթոլիկը հեռացել են կրօնով ազգի ամբողջութիւնից—ergo՝ հայ-բողոքականները, հայ-կաթոլիկները Մեհրուժաններ են ու Վասակներ... Հասած ենք!

Ընթերցողի համար բաւական են „Արարատի" այս մի քանի դատողութիւնները, որ նա համաձայնուի մեր արած յետագայ résumé-ի հետ նորա ամբողջ յօդուածից.

ա. Դատողութիւնը անչափահասութիւն է։

բ. Դատողութիւնը չէ պարունակում իր մէջ ոչ տրամաբանութիւն և ոչ ժամանակի ճշտութիւն։

Գաւ. Լազուրեան

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

փետրվարի 10-ին

Արդէն մի քանի տարի է, որ հանգանակութիւն էր պատրաստւում Մոսկվայի հայ հասարակութեան մէջ, բայց այդ հանգանակութիւնը զանազան պատճառներով յետաձգւում էր։ Վերջապէս փետրվարի 3-ին մեծ. Աննենանցը հրաւէրներ ուղարկեց անվանի հայերին՝—շնորհ բերել իր տունը, միասին խորհրդակցելու այն միջոցների վրա, որով պիտի կարողանանք օգնութեան ձեռք մեկնել մեր կարօտեալ աշխատաւոր հայ եղբարց։—Հաղորդեցան մօտ 10—15 անձինք (թէև հրաւէրներ ուղարկած էին մօտ 40 մարդոց)։ Արժանապատիւ հայր Սուքիասեանցը մի համառօտ՝ բայց ազդու խօսքով մէկնեց ներկայ գտնուողներին այն սաստիկ կարօտութիւնը, որ զգալի է այժմ տաճկահայաստանի հայերի մէջ, մանաւանդ նա չմոռացաւ Վասպուրականի և Տարօնի աշխատաւորների մասին, որոնք զուրկ լինելով թէ հացից և թէ սերմից՝ ճգնաժամի մէջ են գտնվում։ Արժ. ատենապետը յիշեց և Կ. Պօլսոյ «Միացեալ ընկերութեանց» անձնուրացների ջանքը, որոնք նոյնպէս կարօտ են անյապաղ նիւթական օժանդակութեան և որոնց պէտք է մենք օգնենք—ասաց նա. եթէ չենք ուզում, որ այս տարուայ մէջ ընկերութեանց ուսումնարանների թիւը 24-ից մինչև 4 իջնի և հազարաւոր հայ մանուկներ՝ զրկվելով դպրոցների բարերար ազդեցութիւնից, անգործ—անբան թափառ շրջեն....»

Մի և նոյն մտքով խօսեց և պ. Լէյինը, համառօտելով հայր Սուքիասեանցի յիշած զգալի կարօտութիւնները տաճկահայաստան հայ սովեալց և «Միացեալ ընկերութեանց» ուսումնարաններին վերաբերեալ և ցոյց տալով նիւթական օգնութեան անհրաժեշտ լինելը։ Պ. Լէյինը բայցի դրանից աւելացրեց, ցանկալի էր հանգանակութիւնից մի փոքր բաժին էլ հանել Խարբերդի վիճակի գիւղական ուսումնարանների համար, որի մասին տեղական առաջնորդը քանիցս գրել է Մոսկվայի հայ հասարակութեան անդամներից մի քանիսին.—

Այնուհետև հայր Սուքիասեանցը՝ նախագահութեան առնելով այս մի քանի պահանջները և ցանկալով, որ Մոսկվայի հայերի մէջ հանգանակութիւնը կրկնուի ամէնայն տարի—առաջարկեց հետևեալը. իւրաքանչիւր տարուայ հաւաքած նուիրատուութիւնները բաժանել երեք մաս. 60% հասցնել սովեալ և կարօտեալ տաճկահայաստան հայերի, 20% ուսումնարաններին (գլխաւորապէս «Միացեալ ընկերութեանց»), իսկ մնացեալ 20% պահել իբրև հիմնական գումար—մայր գումար—այլ և այլ անակնկալ պէտքերի, պահանջմունքների և կարօտութիւնների համար, որոնք միշտ անպակաս են։ Այս առաջարկութեան օգտին խօսեցին ուրիշներն էլ և միաձայն ընդունել նրան։

Սրանից յետոյ սկսվեցաւ հանգանակութիւնը ներկայ գտնուողների մէջ և ժողովեցաւ 2000 րուբլուց աւելի։ Բայց՝ յայտնի բան է՝ այս բաւական չէ. այս միայն սկիզբն էր. հանգանակութիւնը պէտք է շարունակուի հայ հասարակութեան մէջ։ Ուստի՝ անցեալ տարուայ պէս, այս տարի ևս ընտրեցին յանձնաժողով 3 մարդուց բաղկացած (պ. Շամիրզաեանց, պ. Խաչատեանց և պ. Փանեանց), որոնք պէտք է շրջեն հանգանակութեան մատեանով և ժողովեն նուիրատուութիւնները։ Դրանց՝ ինչպէս և միշտ, կցվեցել հայր Սուքիասեանցը։—Միայն պէտք է յուսալ, որ այս տարուայ յանձնաժողովը այնպէս թոյլ չի գործի, ինչպէս անցեալ տարուայ ընտրվածները (բացի մէկից). բոլոր ամբողջ գումարը 9—10 հազար րուբլու չափ ժողովեցին ոչ թէ ընտրված 3 անձինքը, որոնք առանձնած էին ժողովելու, այլ մի քանի մասնաւոր մարդիկ, որոնք ազգասիրական կարեկցութեամբ յանձն առան ոչ միայն հայերի, այլ և ռուս, գերմանացի և այլ ազգութիւնների մէջ շրջել և նուէրներ հաւաքել։ Փառք և պատիւ այդպիսի ազնիւ հայերին։—Բացի դրանից, ցանկալի էր, որ այս տարվայ յանձնաժողովի անդամները աւելի համաձայնութեամբ գործէին միմեանց հետ և փողերը ուղարկէին բոլոր յանձնաժողովի և ոչ մի անդամի կարգադրութեամբ և անունով.—Մենք մեր կողմից կառաջարկէինք բոլոր նուէրները թէ սովեալց և թէ ուսումնարանների համար ուղարկել «Մշակի» խմբագրութեան միջոցով, որ ունի բոլոր յարմարութիւնները շուտով և ապահով հասցնելու փողերը ուր հարկն է։

Այժմ Մոսկվայի հայ հասարակութեան մնում է մի անգամ էլ զգալի կերպով ցոյց տալ իր ազգասիրական և մարդասիրական զգացմունքների հետ և իր լիբերալ առատաձեռնութիւնը. այժմ մնում է, ասում ենք, առհասարակ մայրաքաղաքների հայերին—ոչ միայն խօսքով այլ և գործով համոզել, թէ՝ միթէ մենք հեռուից հեծեծում ենք գիտենք հայ ասել մեր սովեալ, տառապեալ և ուսումնածարաւ թշուառ հայրենակիցների վրա....

* * *

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

—

Յունվարի 25-ին

Կարդացինք «Մշակի» ներկայ տարվայ առաջին համարները։

Ալէքսանդրապոլի հայ-կաթոլիկներս աւելի հաւանութեամբ պէտք է վերաբերուինք ձեր լրագրի տասներորդ շրջանին, ոչ թէ միայն նրա հասարակական գործունէութեան պատուաւոր նշանակութեան պատճառով, այլ և գլխաւորապէս նրա համար, որ «Մշակը» մեր կովկասեան հայոց պարբերական հրատարակութեանց մէջ առաջինը և ամենաանկեղծը հանդիսացաւ ընդհանուր ազգութեան գաղափարը տարածելու, ընդհանրացնելու գործում կովկասի հայ հասարակութեան մէջ։ Նա համառօտապէս համակրութեամբ վերաբերւեց դէպի կովկասի բոլոր դաւանութեանց պատկանող հայերը և որպէս ճշմարտութեան առաջին ձայն, նա ազգային միութեան անհրաժեշտ խնդիրը յարուցեց և ընդհանրացրեց մեր հասարակութեան մէջ։

Բայց դժբաղդաբար մեր մէջ, ամեն մի ճշմարտութիւն, ամեն մի ժամանակակից առողջ միտք հանդիպում է շատ և շատ հակառակութիւնների, թէև չէ կարելի չը խոստովանել և այն ճշմարտութիւնը, որ «Մշակի» անկեղծ եղբայրական զգացմունքը, նրա ճշմարիտ ազգասիրութիւնը մի հիմնաւորապէս չունէր տեղ մեր առանձնացած կրօնական հասակցութիւնների մէջ, Ալէքսանդրապոլի կաթոլիկ հայերս էլ զգալով այդ գաղափարի նշանակութիւնը, գիտեցինք ազգութեան գաղափարին և սիրեցինք համակրելով նրանով ինչպէս մեր սեփական, սիրելի գաղափարով։

Մի և նոյն ժամանակ ցաւալի է ասել, որ մեր հասարակական գործիչներից շատերը հեռու են այդպիսի զգացումից, թէև միւս կողմից նրանց այդ անտարբերութիւնը պէտք է վերաբերել նոյն իսկ մեր հայ-կաթոլիկներիս առանձնութեանը և անտարբերութեանը։

Մեզ վրա խօսում են միայն այն ժամանակ, երբ կրօնական մի հարց է լինում, բայց մնացածով, որպէս հայ ազգի մի մասով չեն հետաքրքրվում, չեն քննում ու զննում մեր առօրեայ կեանքը, մեր պէտքերը։ Իսկ մենք ինքներս լռում ենք այդ ամենի մասին, այդպիսով ոչ ոք չունի մեր մասին ճիշդ տեղեկութիւն և մեր կեանքն էլ մնում է անփոփոխ, անշարժ։

Բայց որովհետև այդպիսի կեանք մեզ համար վատ ապագայ կարող է պատրաստել, ուստի մեզ այժմ հարկաւոր է անպատճառ հետաքրքրվել ազգային առօրեայ հարցերով, մեր խնդիրը պէտք է լինի անկեղծ զգացմունքով մօտենալ մեր եղբայրներին և ցոյց տալ նրանց մեր կենսական անհրաժեշտ խնդիրները և պահանջները։ Այդ պահանջում են մեր խեղճական շահերը, որովհետև կեանքի անհրաժեշտ պահանջները ստիպում են մեզ այդ կերպ վարվել. մենք պէտք է մեր սեփական օգտի համար ազգային կապը պահ-

---

—Ուղիղ այդպէս, իմ խելացի տղաս, լաւ հասկացար. Աստուած է վկայ, լաւ հասկացար։ Ի զուր չէ, որ վրադ թագաւորը քեզ նման իմաստունին իր վէզիր է շինել։ Խելքդ ծով է, ինչ ասել կուզէ, ամեն բան հասկանում ես։

Բէկը ժպտաց և ոչինչ չը պատասխանեց։ Պառաւ Քեթևանի աղջիկները, Սոփիոն և Փէփէլան, այդ միջոցին գդգդալով, ասելով վրա պատրաստում էին ընթրիքի սեղանը, վախենալով, մի գուցէ Դարսի հետ պատահածը իրանց էլ պատահի։ Բայց նրանց բախտից վիթխարին այդ ժամանակ դարձաւ դէպի երկու ազնիւների եղբայրներից մէկը, Նիկոն, հրամայելով.

—Էյ, քեզ եմ ասում, Նիկո, գնա գինու մի նոր կարաս բաց արա, այն կարմիրից, հասկանում ես։

—Անցեալ օրվայ բաց արած կարասը դեռ կէս չէ եղել, տէր իմ, պատասխանեց Նիկոն առջից չը շարժվելով.—այն էլ կարմիր է, նոյնքան կարմիր, ինչպէս նամ հասրիկը։

—Քեզ ինչ որ ասում եմ, այն լսիր, իմ գլուխ, դատողութիւն անել պէտք չէ, գոչեց վիթխարին բարկանալով.—Հիմայ անցած հիւրեր կը գան, եթէ քո մայր Քեթևանը իր գլուխն էլ ուտացնէ, չէ կարող կշտացնել նրանց։

Նիկոն առանց այլ ևս հակառակելու, վեր առաւ բահը, իր եղբայր Փրիզոնի հետ գնացին կարմիր գինու մի նոր կարաս բաց անելու։ Նրանց քոյր Նինոն, վառած ջահը ձեռքին բռնած, լուսաւորում էր նրանց ճանապարհը։ Գինու կարասները, թւով աւելի քան հարիւր, թաղած էին բէկի տանը կից պարտիզում, գետնի մէջ։ Երկու եղբայրները անցան դէպի պարտէզի այն կողմը, որտեղ թաղված էին կարմիր գինու կարասները։ Նիկոն սկսեց բահով փորել գետինը, իսկ նրա եղբայրը ճանկերով յետ էր քաշում հողը։ Շուտով երևաց կարասի խուփը, որը վեր առնելով, կախեթի ազնիւ ըմպելիքի անուշհոտութիւնը հեռացնելու չափ հասարակ նրանց։ Երկու եղբայրները, նախ քան գինին դէպի տուն կրելը, ընդրեն առաջին փայլուն գաւաթը, իւրաքանչիւրը մի-մի գաւաթ խմեցին, չը մոռացան մի գաւաթ ևս իրանց քոյր Նինոյին տալ իր ծարաւը յագեցնելու համար։ Յետոյ ոչխարի տիկերը լցնելով, կարասի բերանը կրկին ծածկեցին հողով, և վեր առած գինին տարան տուն։

Վիթխարին փորձի համար պահանջեց, որ նոր բաց արած գինուց տան իրան. երբ բաւական լայնածաւալ բաժակը դատարկեց նա, մի առանձին հաճութեամբ ասաց.

—Այդ ևս հասկանում եմ, դրուստ Ցխրա-Փրինասի սուրբ հաղորդութեան գինին է։—Վնաս չէ, իմ գլուխ, դարձաւ նա դէպի Նիկոն,—դու ուզում էիր քացախով լցնել մեր փորը։ Այս գինով ևս էլ շնորհակալ կը լինեմ. Աստուած էլ։

—Ի՞նչ եղան այդ անպիտանները, այսքան ժամանակ ուշացան, խօսեց նա ինքն իրան,—ես նրանց Յիրտցայի մօտ թողեցի, որտեղ կորան, դեռ չեն երևում։

Բէկին լաւ յայտնի լինելով, թէ ինչ հիւրերի է սպասում վիթխարին, առանձին չը հարցրեց, ովքեր պէտք է լինեն եկողները. միայն նա աւելի գոհ կը լինէր, եթէ այս գիշեր իրան հանգիստ թողնէին իր մարերի հետ զրօսնելու համար։

Բայց պառաւ Քեթևանը, չը համբերելով, հարցրեց.

—Ո՞վքեր պիտի գան։

—Դրացիները, որ հօգիդ տանեն, քաջ..., պատասխանեց նա ծիծաղելով.—Համբերութիւն ունեցիր, հիմայ կը տեսնես աւաղ գայլերի նման ներս կը թափվին։

Բայց ինքը վիթխարին, չը կարողանալով համբերել, վեր կացաւ, որ տեսնէ, թէ ինչու ուշացան հիւրերը։ Բէկը մտածելով, որ նոր անկարգութիւններ կարող են պատահել, հրամայեց ծառաներին, որ շներին կապեն։

—Պէտք չէ, ասաց նա.—շները շան միս չի ուտի... և դուրս եկաւ անենալից։

Վիթխարին հեռանալուց յետոյ Աշոտն հարցրեց բէկից.

—Այդ մարդը գժո է, ինչ է.

—Ո՛չ, նա մի չափազանց բարի և անկեղծ մարդ է, ասաց նրան բէկը։

Բայինդուր իշխանը, պարսից թագաւորից «բաթման-գլխի» տիտղոսը կրող հսկան, բնիկ սիւնեցի էր, ազգով հայ։ Նա քառասուն և հինգ տարեկան հազիւ կը լինէր։ Բայց թագաւորական կեանքը մի կողմից, որ նա վարել էր երբեմն պարսից, երբեմն տաճկաց ծառայութեան մէջ, իսկ ազնիւ և արկածներով լի կեանքի դառնութիւնները միւս կողմից, պատել էին նրա գլուխը փաղահեա այնքաններով, որ բոլորովին չէին համապատասխանում նրա տարին. մշտագանգուր գէշքին, որը տակաւին պահպանել էր իր երիտասարդական թարմութիւնը։ Դեռ վաղուան չեղած, Բայինդուր իշխանը որպէս զօրապետ ծառայում էր Ատրպատականի պարսից փոխարքայի մօտ և շատ սիրված ու յարգված էր նրանից։ Բայց նրա սրտային յարաբերութիւնները փոխարքայի հարեմական կիներից մէկի հետ առիթ տուեցին նրան թողնել Թաւրիզը և հեռանալ դէպի Վրաստան։ Այստեղ գտաւ նա Դաւիթ բէկից պաշտպանութիւն և նրա ձեռնտուութեամբ յաջողվեց վրաց ծառայութեան մէջ մտնել։

Առհասարակ ամեն դարերի ընթացքում, երբ հայոց քաջերից մէկը կամ յունաց, կամ պարսից, կամ տաճկաց, կամ վրաց ծառայութեան մէջ յաջողութիւն է գտել, հռչակ և նշանակութիւն է ստացել, բարձր աստիճանների է հասել, այնուհետև փոքր առ փոքր խմբվել են նրա շուրջը ուրիշ շատ հայեր, որոնք իրանց ազգակցի մօտ որ և իցէ պաշտօն գտնելու փափագով դիմել են նրան և մնացել նրա մօտ։ Այդպէս էլ Դաւիթ բէկի հռչակը հրապուրեց դէպի Վրաստան հայոց երիտասարդներից շատերին։ Ամեն կողմից հայ փախստականներ, անաշխարհիկներ, բախտախնդիրներ, գալով նրա մօտ, սիրալիր ընդունելութիւն էին գտնում և նրա օգնութեամբ ծառայութեան մէջ էին մտնում։ Բէկը մեծ հաւատ ունէր հայերի քաջութեան, խելքի և հաւատարմութեան վրա, այս մտքով աշխատում էր, որքան կարելի է, իրան շրջապատել իր համազգիներով։ Այսպիսիների թիւը քանից աւելի կը լինէր, որոնցից մէկն էր Բայինդուր իշխանը։ Բէկի դուռը ամեն ժամանակ բաց էր նրանց առջև և նրա սեղանը բոլորի համար հաւասարապէս էր զարդել։ Դրանով պէտք է բացատրել Բայինդուր իշխանի ընտանութիւնը, որով այնպէս ազատ վարվում էր բէկի գինու կարասների հետ։

—Հիմայ դու կը տեսնես այստեղի նշանաւոր հայ ազատներից մի քանիսին, ասաց բէկը դառնալով դէպի Աշոտին,—նրանցից ամեն մի աշխարհիկ են։

Աշոտն անհամբերութեամբ սպասում էր Բայինդուր իշխանի վերադարձին, որ գնաց հիւրերին դիմաւորելու։ Քեթևանը անհանգստութեամբ մրմնջում էր. հիւրերի այցելութիւնները ուրիշ այնքան անհանգստութիւն չէին պատճառում, որպէս նրան. Պառաւ տանտիկինը սարսափած էր միայն առաւօտ անցուն մնալ, որին խնամ կարող էին նրա յղված և մաշված անդամները։ Իսկ այդ գիշեր նրա անհանգստութեանը չափ չը կար, երբ բէկը հրամայեց կերակուրների թիւը աւելացնել։

(Կը շարունակուի)